

Կ Ո Ս Պ Ո Չ Ի Տ Ո Ր Ա Վ Կ Ա Ն Ե Վ Գ Ա Շ Ե Ն Ս Ս Մ Ո Ւ Բ Ա Յ Ի Ն Կ Ա Տ Ա Ր Ո Ղ Ա Վ Կ Ա Ն Ա Ր Վ Ե Ս Տ - Ե Ր Ա ժ շ Կ Մ Ո Ւ Թ Յ Ո Ն Ա Ն Կ Ա Ս Կ Մ Ո Ւ Թ Յ Ո Ն Ա Ն

ԱՐՏՅՈՒ ԳԵՐԱՍԻՄԻ ԱՆԴՐԵԱՅԱՆ

Արվեստի պատմաբան, ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայ արվեստի պատմության և տեսության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի մագիստրոսական 2-րդ կուրսի ուսանող
E-mail. harry.andrews.klavierist@gmail.com

ԵՊԿ «Երաժշտական Հայաստան» ամսագրի Խմբագրական խորհրդի կողմից Ծովինար Հրայրի Մովսիսյանի երաշխավորությամբ և ընդունվել տպագրության՝ դեկտեմբերի 11-ին գրախոսներ՝ Արա Բարաջանյան՝ «Առնո Բարաջանյանի հիշատակին» միջազգային հիմնադրամի նախագահ, ներկայացրել է հեղինակը՝ սեպտեմբերի 28-ին

ԱՌՆՈ ԲԱԲԱԶԱՆՅԱՆԻ ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ԵՐԿԵՐԸ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

ԽՆՏՄ ժողովրդական արտիստ, պետական և միջազգային մրցանակների դափնեկիր, կոմպոզիտոր, դաշնակահար, մանկավարժ Առնո Հարությունի Բարաջանյանի (1921-1983 թթ.) հիմնական և սիրելի երաժշտական գործիքը դաշնամուրն էր: Եթե ժամանակին գրվել է, որ նրա դաշնամուրային երկերում առավել լիակատար կերպով երևում են նրա ոճի փուլային զարգացման բոլոր շրջաններն անխտիր (15. էջ 11), ապա նրա երկերի համակողմանի ուսումնասիրումից պարզ է դառնում, որ նա չի գրել որևէ երկ, որտեղ դաշնամուրն այս կամ այն չափով տեղ չունենար:

Հայտնի է, որ Բարաջանյանն իր կատարողական արվեստը կատարելագործել է Մոսկվայում՝ նախ Ելենա Ֆաբիանի Գնեսինայի (1874-1967 թթ.), ապա Կոնրատանտին Նիկոլայի Իգումնովի (1873-1948 թթ.) և վերջինիս ասիստենտ Բորիս Մոխիլի Բեռլինի (1906-1995 թթ.) ղեկավարությամբ: Իգումնովը, որը 1924-1929 թթ. եղել է Մոսկվայի կոնսերվատորիայի դիրեկտոր (այդ թվականներին ռեկտոր չէր կոչվում պաշտոնը այլ դիրեկտոր), ոչ միայն պրոֆեսիոնալ դաշնակահար էր, այլ նաև Սերգեյ Ռախմանինովի արվեստի չգերազանցված գիտակ, որը երաժշտագետ Պավել Ալեքսանդրի Լամմի (1882-1951 թթ.) հետ միասին խմբագրել է Ռախմանինովի դաշնամուրային երկերի լիակատար ժողովածուն (4 հատորով. *М.-Т.*, 1948-1951 թթ). թերևս այսպես պիտի բացատրել նրա արվեստի մասին Բարաջանյանի խորը գիտելիքները:

Վերջինիս նվիրված գրականության մեջ գրեթե ոչ մի հիշատակություն չկա Բորիս Բեռլինի մասին: Այդ բացը լրացնելու համար նախևառաջ նշենք, որ դաշնակահար, կոմպոզիտոր, պրոֆեսոր Բորիս Բեռլինը 1931-1947 թթ. եղել է Կոնստանտին Իգումնովի ասիստենտը Մոսկվայի կոնսերվատորիայում (29. էջ 38): 1942 թ. փետրվարին, մինչ Իգումնովը հրավիրվել էր դասավանդելու Երևանի կոնսերվատորիայում, Սարատովի կոնսերվատորիայում տեղի է ունեցել Բեռլինի ուսանողների համերգը, որին մասնակցել է նաև Առնո Բարաջանյանը (29. էջ 40): Վերջինս, Ալեքսանդր Հարությունյանն ու Էդվարդ Միրզոյանը նրա մոտ ուսանել են Մոսկվայի Հայկական մշակույթի տանը 1946-1948 թթ. (29. էջ 42):

1948 թ. մարտի 24-ին վախճանվեց Կոնստանտին Իգումնովը որից հետո նրա դասարանն ստանձնեց երաժշտագետ, մանկավարժ Յակով Բասակի Միլշտեյնը (1911-1981 թթ.). վերջինիս ղեկավարությամբ էլ Բարաջանյանը գերազանցությամբ ավարտեց Մոսկվայի կոնսերվատորիայի դաշնամուրի բաժինը (34. էջ 49): Ժամանակակիցները հատկապես հիացմունքով են հիշում Մոսկվայի կոնսերվատորիայի փոքր դահլիճում տեղի ունեցած ավարտական համերգը (24.): Հայտնի է նաև, որ նույն 1948 թ. նա մասնակցել է ասպիրանտուրայի ընդունելության քննությանը, սակայն ինչ-ինչ պատճառներով «կտրվել» է (34. էջ 50)*: (Ի դեպ՝ քննություններից մեկի ժամանակ Բարաջանյանը կատարել է Սկրյաբինի ոճով գրված մի էտյուդ* [ըստ որոշ վկայությունների՝ իմպրովիզացիա (24.)] և մի ֆոքստորոտ. պարզ չէ, թե կոնկրետ որ՝ փոխադրման, ավարտական, թե ասպիրանտուրայի ընդունելության քննության մասին է խոսքը): Վերջերս դաշնակահարուհի Սոնա Արշակյանը հրապարակել է մի հոդված, ըստ որի՝ Բարաջանյանն ասպիրանտուրան շարունակել է Լեոնինգրադում (17. էջ 91): Այլ տվյալների համաձայն՝ 1950 թ. գրված «Հերոսական բալլադը» որպես դիպլոմային աշխատանք ներկայացվել է Մոսկվայում (19. էջ 2): Իսկ Արա Բարաջանյանը վկայում է, որ իր հայրը ասպիրանտ չի եղել ոչ Մոսկվայում, ոչ Լեոնինգրադում*:

1950-1956 թթ. նա դաշնամուրի բաժնի դասախոս էր Երևանի կոնսերվատորիայում. նրա ուսանողներից են եղել Ռոզա Արմենակի Թանդիլյանը, Վահագն Պարույրի Ստամբուլյանը և Ռոբերտ Անդրեյի Շուգարովը: Նրանց հուշերն ու վկայությունները Բարաջանյան-մանկավարժի մասին տեղ են գտել զանազան ամսագրային հրապարակումներում, ինչպես նաև մոսկվա-

* Արա Բարաջանյանի՝ տողերիս հեղինակին ուղղված անհատական նամակից (2017 թ. նոյեմբերի 21):

Կ ո մ ա զ զ ի տ ո թ ի ժ ա ռ ա ն գ ու թ յ ա ն հ ե տ ա գ ո տ ու թ յ ու ն

բնակ երաժշտագետ Միխայիլ Իվանի Տեր-Օհանյանի (1918-2011 թթ.) «*Арно Бабаджанян*» ռուսերեն մենագրությունում (34. էջեր 276-284): Ըստ այդմ՝ պարզվում է, որ իր վարած դասերի ժամանակ նա ուսանողներին ավելի հաճախ հանձնարարում էր արևմտյան (Բախ, Բեթհովեն, Շոպեն, Բրամս և այլք), ինչպես նաև ռուս (օրինակ՝ Ռախմանինով) դասական կոմպոզիտորների մանրանվագներ և պոլիֆոնիկ ստեղծագործություններ, մինչդեռ սոնատների և կոնցերտների հանդեպ առավել զգոն էր. ավելին՝ նա հատուկ ուշադրություն էր դարձրել հստակ ռիթմին և առաջարկվող ապլիկատուրայի խստիվ պահպանմանը: Տեր-Օհանյանի հրապարակած տվյալներին վստահելու դեպքում ստացվում է, որ Բաբաջանյանն իր մանկավարժական պրակտիկայում էլ գերադասում էր կատարողի անհատական ստեղծագործ մոտեցումը տվյալ ստեղծագործությանը (առանց բուն տեքստն աղավաղելու, իհարկե) և դժվար էր տանում զուտ տեխնիկապես գրագետ կատարումները: Հարանման կարծիքներ կարելի է հանդիպել Բաբաջանյանի «*Израют психисты*» հոդվածում, որի ձեռագիրը հեղինակի ընտանիքի սեփականությունն է. այս հոդվածի մեջբերմամբ է ավարտվում Տեր-Օհանյանի մենագրության «*Бабаджанян-педагог*» գլուխը (34. էջ 284):

Հայտնի է, որ Բաբաջանյանը 1955 թ. ստացել է դոցենտի կոչում: Անտեստավորման գործընթացին վերաբերող փաստաթղթերը պահպանվել են ինչպես Հայաստանի ազգային արխիվում (9.), այնպես էլ Ռուսաստանի պետական արխիվում (22.): Կից երաշխավորագրերը հեղինակել են այնպիսի երաժիշտներ, ինչպես Դմիտրի Շոստակովիչը, Հենրի Նեյխաուզը, Յակով Միլշտեյնը և Դավիդ Օյստրախը, ընդ որում՝ Շոստակովիչի և Միլշտեյնի երաշխավորագրերը հրապարակված են: Հայտնի է նաև, որ իր կյանքի վերջին տարիներին Բաբաջանյանը եղել է Մոսկվայի կոնսերվատորիայի դաշնամուրային ֆակուլտետի պետական քննական հանձնաժողովի նախագահ (34. էջ 284): Ավելին՝ որոշ փաստագրական ֆիլմերում (ինչպես, օրինակ, 2011 թ. թողարկված «Մեր Առնոն» ֆիլմում) Բաբաջանյանին վերագրվել է պրոֆեսորի կոչում, մինչդեռ այս տվյալը չունի որևէ փաստական հիմք:

Կասկածից վեր է, որ Բաբաջանյանի դաշնամուրային գործերի, ինչպես նաև այլ երկերի դաշնամուրի նվագաբաժնի լավագույն կատարողը եղել է հեղինակն ինքը. նրա կատարումների ձայնագրությունները ժամանակի ընթացքում չեն կորցրել ոչ միայն իրենց տեխնիկական որակը, այլև գեղարվեստական և պատմական նշանակությունը: Բաբաջանյանի արվեստն ուսումնասիրող երաժշտագետների և դաշնակահարների համար դրանք ունեն սկզբնաղբյուրի և չգերազանցված մեկնաբանման արժեք:

Հայտնի է նաև, որ նրա կատարողական արվեստը բարձր է գնահատվել այնպիսի հռչակավոր վիրտուոզ դաշնակահարների կողմից, ինչպիսիք են Ալեքսանդր Գոլդենվեյզերը, Սվյատոսլավ Ռիխտերը, Էմիլ Գիլելսը, Լև Օրորինը: Յավայի է, որ պահպանվել են նրա կատարումների հատուկ նախագրություններ և տե-

սագրություններ միայն, որոնք շատ հաճախ վերաթողարկվել են: Ավելին՝ 1956 թ. Մոսկվայում մշտական բնակություն հաստատելուց հետո Բաբաջանյանն աստիճանաբար հրաժեշտ տվեց կատարող-դաշնակահարի կարիերային և իրեն ամբողջովին նվիրեց կոմպոզիտորական արվեստին:

Պատահական չէ, որ հատուկ ուշադրություն է դարձվում նրա մենանվագ դաշնամուրային երկերին: Դրանք ժամանակին արժանացել են մասնագիտական վերլուծության այնպիսի երաժշտագետների կողմից, ինչպիսիք են Եվգենիա Գիլինան, Մայա Պրիցկերը, Շուշանիկ Աբդյանը, Սուսաննա Ամատունին և այլք: Տեր-Օհանյանի մենագրությունում խնդրո առարկա դաշնամուրային երկերին հատկացված է առանձին գլուխ՝ «*Антология фортепианного творчества*», որտեղ կարելի է գտնել նոր տվյալներ դրանց ստեղծման և հետագա պատմության մասին: Այսօր էլ երաժշտագիտական գրականությունը պարբերաբար համալրվում է Բաբաջանյանի կյանքին և ստեղծագործությանը նվիրված հոդվածներով: Այնուամենայնիվ, Բաբաջանյան-արվեստագետի կերպարի ամբողջացման խնդիրը դրանով չի լուծվում, անհրաժեշտ են նրա մասին տվյալների նոր որոնումներ թանգարաններում, գրադարաններում, պետական արխիվներում և այլուր:

Բանն այն է, որ ի տարբերություն խորհրդահայ այլ կոմպոզիտորների, որոնց ստեղծագործական դիմապատկերները հիմնականում ամբողջական են և չունեն հավելյալ ճշտման կարիք, Առնո Բաբաջանյանի կյանքի և ստեղծագործության առթիվ կան բազմաթիվ հարցականներ, որոնք վերաբերում են ինչպես ժամանակագրությանը, այնպես էլ ավելի խորը հարցերի, թե՛ տվյալ ստեղծագործությունը ինչ հանգամանքներում է գրվել, ում համար, պրեմիերան երբ է եղել, ինչ մրցանակի է արժանացել և այլն: Դա վերաբերում է նաև նրա դաշնամուրային երկերին: Կոմպոզիտորի որոշ երկերի ստեղծման թվականը տարբեր աղբյուրներում տատանվում է ինչպես մեկ-երկու, անգամ էլ մինչև տասը տարի ժամանակահատվածում: Եվ այդ հակասական տվյալները հանդիպում են այնպիսի երաժշտագետների աշխատանքներում, ինչպիսիք են պրոֆեսորներ Սվետլանա Սարգսյանը և երջանկահիշատակ Գևորգ Գյոդակյանը: Խորին հարգանքը հիշյալ երաժշտագետների նկատմամբ՝ չենք կարող չբարձրաձայնել այս խնդիրների մասին, որոնք արդեն վերաճվել են գիտական թնջուկի:

Նշենք վիճահարույց մի քանի օրինակ: 1947 թ. Պրահայում անցկացված Երիտասարդության և ուսանողության առաջին համաշխարհային փառատոնի կոմպոզիտորական մրցույթին Բաբաջանյանը դր ստեղծագործություններն է ներկայացրել* և ինչ մրցանակի է արժանացել: Ինչո՞ւ են այդ մրցույթում Բաբաջանյանի ստացած երկրորդ (11. էջ 33) մրցանակը դարձնում առաջին (12. էջ 120): Նույնպես և «Հերոսական բալլա-

* Եթե Բաբաջանյանին նվիրված գրականության մեջ որպես 1947 թ. Պրահայի փառատոնին հնչած պիեսներ նշվում են Պրեկյուդը, Վադարշապատի պարը և Տոկկատան

դի» համար նրա ստացած Ստալինյան երրորդ կարգի (28.) մրցանակը այժմ որոշ աղբյուրներում դարձել է առաջին՝ առանց որևէ հղման կամ ապացույցի: Եթե այդ տվյալների հեղինակները փորձում են դրանով ավելի բարձրացնել Բարաջանյանի մեծությունը և նրան ավելի վառ գույներով ներկայացնել, մենք հարկ ենք համարում նշել, որ դրա կարիքն ամենևին չկա. Բարաջանյանի արվեստը առանց այդ էլ հանճարեղ է:

Խնդիրը ոչ միայն վերոհիշյալ երաժշտագետների ներկայացրած հակասական տվյալների մեջ է: Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Բարաջանյանի ֆոնդում հանդիպել ենք որոշ կենսագրական ակնարկների և ստեղծագործությունների ցուցակների, որոնք կազմվել են թերևս նրա կողմից. Տեր-Օհանյանը դրանք հիշատակում է որպես ինքնակենսագրական ուրվագիր (34. էջ 63): Այստեղ և այլուր խնդիրն առավել առնչվում է թվագրմանը: «Վաղարշապատի պարը», ըստ մի ձեռագիր ցուցակի, գրվել է 1951-1952 թթ. ընթացքում (5. № 1356-1358), այնինչ հնչել է Պրահայում 1947 թ. և տպագրվել Երևանում 1948 թ.: Կամ՝ դեռ պարզ չէ՝ «Վեց պատկեր»* շարքի՝ ՀԽՍՀ պետական մրցանակի արժանանալու տարեթիվը, այն տարբեր աղբյուրներում տատանվում է 1965-1970 թթ. միջև: Իսկ պրոֆեսոր Սվետլանա Սարգսյանի անգլալեզու հոդվածներից մեկում «Մոտրում» պիեսին տրվել է 1980 թվագրումը (37.), այնինչ այն տպագրվել է 1977 թ. և առաջին անգամ հնչել դեռևս 1969 թ.:

Իսկ թե ինչու են առաջացել այսպան խնդիրներ՝ գոյություն ունեն նաև հասկանալի պատճառներ: Բարաջանյանն իր նոտային ձեռագրերում շատ հաճախ թվական չի դրել: Հետո՝ երեսնամյա ծանր հիվանդության հետ մեկտեղ ստեղծագործական ու համերգային բուռն գործունեության պատճառով նա չհասցրեց գրել որևէ ընդարձակ ինքնակենսագրություն, որտեղ կարող էր տեղ գտնել նաև նրա երկերի ցուցակը՝ ճշգրիտ թվագրմամբ: Այս ամենը հաշվի առնելով կարող ենք եզրակացնել, որ Բարաջանյանի ստեղծագործական կենսագրությունը պիտի վերականգնվի երկրորդական աղբյուրների՝ նրա գրած և ստացած նամակների, հեռագրերի, խորհրդային մամուլի, ՀԽՍՀ և ԽՍՀՄ կոմպոզիտորների միությունների տեղեկագրերի, ժամանակակիցների հուշերի և այլնի միջոցով:

Մոտրն ներկայացվում են ինչպես հաստատված, այնպես էլ հետագա ճշման կարիք ունեցող տվյալներ Բարաջանյանի հիմնական դաշնամուրային երկերի մասին. առավել անհայտ և անտիպ դաշնամուրային երկերին և դրանց հետ առնչվող տարբեր խնդիրներին անդրադառնալու համար անհրաժեշտ է լինելու առանձին ուսումնասիրություն:

ՊՐԵԼՅՈՒՎ: Առնո Բարաջանյանի դաշնամուրային երկերի բոլոր հեղինակային ժողովածուները սկըս-

վում են այս պիեսով: Դա կարելի է բացատրել ինչպես հեղինակային կամքի սկզբունքով, այլև նրանով, որ սա Բարաջանյանի հասուն շրջանի առաջին երկերից է: Հայտնի է, որ հեղինակն այս պիեսը կատարել է 1947 թ. Պրահայում անցկացված միջազգային երիտասարդական-ուսանողական փառատոնի ժամանակ. թերևս այդ պատճառով է այն սովորաբար թվագրվում հենց 1947 թ., չնայած ԳԱԹ Բարաջանյանի ֆոնդում պահվող անթվակիր (մոտ 1961 թ.) անգլալեզու համերգային բուկլետում այն թվագրված է 1939 թ. (5. № 1359), Տեր-Օհանյանի մենագրության մեջ՝ 1943 (34. էջ 316), Մուսաննա Ամատունու մենագրության մեջ՝ 1940 թ. (15. էջ 13), իսկ ԳԱԹ-ում պահվող վերոհիշյալ ձեռագիր ցուցակներից մեկում՝ 1938 թ. (5. № 1426), երբ հեղինակն ընդունվեց Գնեսինների ինստիտուտ:

Սեդա Թաշյանի վկայությամբ՝ այս պիեսը նվիրված է Կոնստանտին Իգումնովին (7. էջ 36): Այլ տեղեկություն ունի Միխայիլ Տեր-Օհանյանը, ով իր մենագրության մեջ Բարաջանյանի կնոջը՝ Թերեզա Հովհաննիսյանին նվիրված գլխում գրում է, որ վերջինիս անունը նոտաների մեջ հանդիպել է “Будь со мной” երգի տպագիր տարբերակում և այս Պրեյլուդի ինքնագրում (34. էջ 39), որն, ըստ ամենայնի, կոմպոզիտորի ընտանիքի սեփականությունն է:

ՎԱՎԱՐՇԱՊԱՏԻ ՊԱՐ: Բարաջանյանի ամենահայտնի դաշնամուրային երկերից է: Հայտնի է, որ հեղինակն այս պիեսը ևս կատարել է 1947 թ. Պրահայի փառատոնի ժամանակ: Այժմ էլ այս պիեսը սովորաբար թվագրում են 1947 թ., չնայած այլ աղբյուրներում կարելի է հանդիպել 1944 թ. (5. № 1359, 34. էջ 217, 316), իսկ “Арно Бабаджанян — мой современник” ֆիլմում (1967 թ.)՝ 1943 թվագրմանը:

Տվյալ պիեսի հիմքում ընկած է «Ռանգի», «Րանգի» կամ «Երանգի» կոչված երևանյան պարեղանակը, որը ժամանակին դաշնամուրի համար մշակել են Կոմիտաս վարդապետը, Նիկողայոս Տիգրանյանը, Գենարի Կորգանովը և այլք: Ժողովրդական մեղեդու երեք (Տիգրանյան, Կոմիտաս, Բարաջանյան) դաշնամուրային մշակումների համեմատական վերլուծություն է իրականացրել Մուսաննա Ամատունին (15. էջ 16-19):

ԷՔՍՊՐՈՄՏ: Վստահելով Բարաջանյանի կյանքի և ստեղծագործության պաշտոնական ժամանակագրությանը (12. էջ 120), որտեղ այս պիեսը թվագրված է 1936 թ., կարող էինք ենթադրել, թե այն գրվել էր Վարդգես Տայյանի հանձնարարությամբ, բայց բոլորովին այլ են տեղեկությունները Տեր-Օհանյանի մոտ: Մի տեղ նա բերում է կոմպոզիտորի մոսկովյան բնակարանում պահվող ձեռագիր «Էքսպրոմտ»-ի տվյալները, թվագրված՝ 1935 թ. հունիսի 1, տեմպը՝ *Andantino*, ակնհայտ նմանություն կա Ռախմանինովի «Երաժշտական ակնթարթներ» շարքի (օր. 16) 4-րդ պիեսին (34. էջ 25), մի ուրիշ տեղ էլ՝ որ գրվել է «Պրեյլուդ»-ի, «Վաղարշապատի պարի» և դաշնամուրային Կոնցերտի հետ միաժամանակ (34. էջ 74), ավելի կոնկրետ՝ 1944 թ. (34. էջ 316): Մնում է ենթադրել, որ 1935 (կամ 1936) թ. զբրվածը մի ուրիշ էքսպրոմտ է, քանի որ ներկա «Էքսպրոմտ»-ը հազիվ թե այդչափ առնչություն ունենա Ռախ-

(34. էջ 127), ապա ըստ 1947 թ. խորհրդային մամուլի՝ մրցանակի է արժանացել դաշնամուրի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված կոնցերտը (11. էջ 33):

* Պրոֆ. Ռոզա Թանդիլյանի հետ տողերիս հեղինակի մասնավոր զրույցից (2017 թ. դեկտեմբերի 13)

ջությամբ առաջին անգամ կատարեց 1958 թ. մայիսի 17-ին Հայաստանի կոմպոզիտորների տան դահլիճում՝ «Անդրկովկասյան երաժշտական գարուն» փառատոնի շրջանակներում (7. էջ 34, 11. էջ 319, 27. էջ 274):

ՎԵՑ ՊԱՏԿԵՐ: Այս ցիկլը սովորաբար թվագրվում է 1965 թ., այսինքն իբր գրվելուց հետո միանգամից է ձայնագրվել ու հրատարակվել, այն ինչ “*Арно Бабаджанян — твой современник*” ֆիլմում (1967 թ.) և պաշտոնական համառոտ ժամանակագրությունում այն թվագրված է 1964 թ.: Իսկ Մոսկվայի Մ. Գլինկայի անվան երաժշտական թանգարանում պահվող ձեռագրերից (31, № 29) պարզվում է, որ այս ցիկլի վրա հեղինակը սկսել է աշխատել Դիլիջանում 1963 թ. (ի դեպ, այդ թվականին է բացվել Կոմպոզիտորների ստեղծագործական տունը, այդ թվականին վախճանվեց հեղինակի հայրը՝ Հարություն Բաբաջանյանը):

Հայտնի է, որ այս ցիկլի համար Բաբաջանյանն արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի, իսկ թվականը տարբեր աղբյուրներում տատանվում է 1965-1970 թթ. միջև: Առավել հավանական է 1967 թ. (21.), չնայած այս տվյալը դեռ կարիք ունի հաստատման՝ ըստ պաշտոնական խորհրդահայ մամուլի: Նույն 1967 թվականին այս պիեսը ներկայացվել է ԽՍՀՄ պետական մրցանակի, բայց չի արժանացել (30.):

Խորհրդային ձայնաթողարկումներում «Վեց պատկեր» շարքը երբեմն ստացել է “*օր. 47*” համարը: Երաժշտագետ Իրինա Ջոլտովան իր “*Бабаджанян - нушанст*” հոդվածում վկայակոչել է ՀՀ Հանրային ռադիոյի ֆոնդերում պահվող երկու հեղինակային ձայնագրություն՝ 1968 և 1983 թթ. (13. էջ 58): Արա Բաբաջանյանը համացանցում հրապարակել է այս ցիկլի ևս մի տեսագրություն՝ հեղինակային կատարմամբ (1977 թ.): Կոմպոզիտորին նվիրված փաստագրական ֆիլմերում տեղ են գտել նաև այլ լսողա տեսա ձայնագրություններ: Հայտնի է մի ձայնագրություն՝ դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանի կատարմամբ (թողարկվել է 1972 թ.), որն, ըստ Տեր-Օհանյանի (34. էջ 137-138) և այլոց վկայության, հեղինակի հետ բանավեճի առիթ է դարձել:

Հայաստանի ազգային գրադարանում առկա է «Վեց պատկեր» շարքի մի եզակի հրատարակություն, որի առկա օրինակի վրա պահպանվել է Հայֆիլհարմոնիայի գրադարանի կնիքը, և որը չի հանդիպում այլուր, նույնիսկ Ռուսաստանի պետական գրադարանում:

Ներկայացնում ենք այդ «նորահայտ» հրատարակության տվյալներն ամբողջությամբ. նոտային տեքստի առաջին էջի անկյունում տպված է “*на правах рукописи*”, իսկ կազմի ետևի կողմում՝ “*Отпеч [атано] в нотопеч [атном] отд [елениу] Пр [оизводственнoго] К [омбина]та Музфонда СССР по За-к [азу]. N395 /тираж 80 экз [емпляров]. / /Мос-ква, Г-99, Смоленская наб [ережная] 2 (հապավված բառերի լրացումը մերն է – Ա. Ա.)*”: Սրա և բուն էջերը, և կազմը խմբագրական մաքրագրի լուսատիպ վերարտադրություն են, ինչը ոչ հազվադեպ է հանդիպում խորհրդային պոլիգրաֆիայի պատմության մեջ: Առաջինից բացի մյուս պիեսների վերնագրերն զրադ-

եցրել են առանձին թերթ, և ամեն պիեսից առաջ անկյունում նշված է կոմպոզիտորի անունը՝ *А. Бабаджанян*: Ընդհանուր՝ 41 էջ: Մեր կարծիքով՝ սա փորձնական հրատարակություն է կամ նախահրատարակչական օրինակ (դրա մասին է վկայում 80 օրինակով տպված լինելը, ինչպես նաև համախորհրդային երաժշտական գրականության տարեգրում (“*Нотная летопись*”) չհիշատակվելը), և հնարավոր հիմք կարող է ծառայած լինել մոսկովյան հետագա հրատարակությունների համար (օրինակ՝ 1966 թ. առանձին տպագրվածը և սրան հետևողները), որոնցում արդեն կատարվել են տարբեր տեքստային փոփոխություններ:

ՊՈՆՄ: Հայտնի է, որ այս պիեսը նախատեսվել է պարտադիր կատարման համար Պ. Բ. Չայկովսկու անվան երրորդ միջազգային մրցույթի (1966 թ. հունիս) երկրորդ փուլում (5. № 409-410): Այդ մրցույթում դաշնամուր անվանակարգում առաջին մրցանակն ստացավ համաշխարհային ճանաչում ունեցող հանրահայտ Գրիգորի Սոկոլովը, այդ ժամանակ 16-ամյա դաշնակահար էր: Թերևս այդ պատճառով է ընդունված այս պիեսը թվագրել 1966 թ., իսկ ինքը Բաբաջանյանն այս պիեսի ստեղծման մասին նշել է՝ “*Весной прошлого года*” (16. էջ 8), այսինքն՝ 1965 թ.:

Ի դեպ՝ ԳԱԹ Բաբաջանյանի ֆոնդում պահվում է 1965 թ. փետրվարի 17-ին կոմպոզիտորի և ԽՍՀՄ Մինկուտի երաժշտական վարչության միջև կնքված մի պայմանագիր (5. № 410), ըստ որի՝ պատվիրվող պիեսը ներկայացնելու վերջնաժամկետն է 1965 թ. ապրիլի 15-ը, իսկ փառատոնի երկրորդ փուլի համար հատուկ գրված պիեսների փակ մրցույթի արդյունքը կհայտարարվի ոչ ուշ, քան նոյեմբերի 1-ը: Այդ մրցույթում Բաբաջանյանի «Պոեմը» արժանացել է առաջին մրցանակի (33, 34. էջ 155) և, ըստ պայմանագրի, հրատարակվել մրցույթի ավարտից քիչ անց:

ՄՏՈՐՈՒՄ: Չնայած այս պիեսը ձայնագրվել է հեղինակի կատարմամբ (1978 թ.) և հրատարակվել նույն ժամանակահատվածում (1977 թ.), այն այսօր էլ համարվում է Բաբաջանյանի՝ առավել անհայտ ստեղծագործություն (36), ինչն իրականությանը համապատասխանում է մասամբ: Տեր-Օհանյանի մենագրության վերջում կա Բաբաջանյանի հիմնական երկերի մի ցուցակ, որտեղ “*Раздумье*” անվան մասին տողատակում գրված է. “*Это единственная пьеса, оставшаяся в рукописи. Все остальные изданы*” (34. էջ 317). Պրոֆ. Թանդիլյանի կազմած ժողովածուի (2006 թ.) ներածականում ևս տվյալ պիեսի մասին նշված է՝ «հրատարակվում է առաջին անգամ»: Այս աղբյուրներում, ըստ երևույթին, անտեսված է 1977 թ. երևանյան անթոլոգիան, որտեղ «Մեղեդու» և «Հումորեսկի» հետ տեղ է գտել նաև այս պիեսը, մյուս կողմից՝ այդ ժողովածուն հաշվի է առնվել 1983 թ. հրատարակված «Հայ կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործությունների անվանացանկում»:

Բաբաջանյանի կյանքի և գործունեության պաշտոնական ժամանակագրությունում այն «Մեղեդու» և «Հումորեսկի» հետ թվագրվում է 1972 թ. (12. էջ 120), պրոֆ. Սվետլանա Սարգսյանի վերոհիշյալ հոդվածում՝

1980 (37), իսկ Գլինկայի անվան թանգարանում պահվող ինքնագիրը մակագրված է. *“Впервые была исполнена в Париже 23 мая 1969 г. на фестивале Советской музыки”* (31. № 34, 34. էջ 131):

ՄԵՂԵՂԻ: Այս և հաջորդ պիեսները կոմպոզիտորը ստեղծել է իր որդու՝ Արա Բարաջանյանի համար՝ իբրև Մոսկվայի Լուսնաշարսկու անվան պետական թատերական ինստիտուտի (ГИТИС) երաժշտական բաժնի պարտադիր դաշնամուրի դասընթացի քննական ծրագրի մաս (34. էջ 130): Գլինկայի անվան թանգարանում պահվող ինքնագիրն (31. № 32) ունի ընծայագիր՝ *“Посвящаю моему сыну Араику для исполнения в институте по общему ф-п.”*:

Այս պիեսը պաշտոնական ժամանակագրությունում թվագրվում է 1972 թ. (12. էջ 120), Հ. Մելիքյանի այբուստում՝ 1973 (36), իսկ ինքնագիրն ունի հստակ թվագրում՝ 1970 թ. հունվարի 17 (31. № 32): Բացահայտ է «Մեղեդու» նմանությունն Արամ Խաչատրյանի դաշնամուրային «Անդանտինոյի» (1926 թ.) հետ: Դա հնարավոր ենք համարում բացատրել հետևյալ կերպ. այս պիեսով կոմպոզիտորը, իր իսկ խոստովանությամբ, ցանկացել է մտավոր վերադարձ կատարել դեպի մանկություն (15. էջ 91):

ՀՈՒՄՈՐԵՍԿ: Այս պիեսը գրվել, առաջին անգամ հրատարակվել և ձայնագրվել է նախորդի հետ գրեթե միաժամանակ (համապատասխանաբար 1970, 1976 և 1978 թթ.) և նախատեսված է կատարման համար իբրև ինստրուկտիվ-ուսուցողական ստեղծագործություն, որտեղ դաշնակահար Հայկ Մելիքյանը նույնիսկ նկատել է ջազային տարրեր (36.): «Մեղեդին» և «Հումորեսկը» մի յուրօրինակ ցիկլ են կազմում, քանի որ ունեն շատ նմանություններ: Չնայած դրան, Տեր-Օհանյանը որոշ կասկած է հայտնել այս երկու պիեսները մի ցիկլում միավորելու առթիվ (34. էջ 125, 130-131):

Հավելենք նաև, որ Բարաջանյանն իր հարցազրույցներում ցանկություն է հայտնել գրել մանկական պիեսների մի շարք (34. էջ 143), որտեղ պիտի ներառվեին նաև «Մեղեդին» և «Հումորեսկը» (4. էջ 18):

ԷԼԵԳԻԱ: Այս պիեսը հիմնված է Սայաթ-Նովայի «Քանի վուր ջան իմ» հայտնի երգի մեղեդու վրա և նվիրված է Արամ Խաչատրյանի հիշատակին, որը վախճանվեց 1978 թ. մայիսի 1-ին Մոսկվայում: Ինքնագիրը (3.), որը հեղինակը նվիրեց Խաչատրյանի երևանյան տուն-թանգարանին, թվագրված է 1978 թ. *“июнь 25-го /Москва”*:

Այս պիեսի մասին Բարաջանյանն իր «Ուզում եմ հուզել հոգիները» նշանավոր հարցազրույցում պատմում է. *“Когда не стало Арама Хачатуряна, я также ощутил необходимость выражения моих чувств посредством музыки. Сочинил Элегию для фортепиано, посвященную его памяти. Использовал в ней мелодию нашего замечательного ашуга, великого поэта Саят-Новы. В этом есть своя история. Летом 1938 г. я приехал на каникулы в Ереван. Застал там Арама Хачатуряна, который писал музыку, заказанную для Декады армянской культуры в Москве, планируемой на*

будущий год. Был это балет “Гаянэ”. Пошел я с визитом к Хачатуряну. Жил он у своей двоюродной сестры, известной певицы, на улице Печатников. Она мне сказала: “Прошу Вас подождать, я спрошу. Через минуту она пригласила: “Пожалуйста, входите.: Вошел. “Садись, Арно, садись:”, - услышал я голос Хачатуряна. У него сидел гость – музыкант (դուդուկահար Մարգար Մարգարյանը), который играл ему народные мелодии на дудуке. Неизвестные себе мелодии Хачатурян сразу же записывал. Затем музыкант сыграл песню Саят-Новы. Хачатурян обратился ко мне и заметил: “Послушай, Арно, какая это гениальная мелодия! Удивительно, как создаются такие мелодии?”. Этот день и эти его слова неожиданно вынырнули из моей памяти, когда услышал трагическое известие о смерти Хачатуряна. Вспомнилась мне эта мелодия, и я написал произведение, оплакивающее эту великую утрату не только армянского народа, но и всей мировой культуры. Во время сочинения я всегда руководствуюсь голосом сердца...” (20. էջ 7-8):

Վերը բերված տեղեկությունն առկա է Տեր-Օհանյանի մեմոարությունում (34. էջ 129-130), ինչպես նաև Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի առաջին տնօրեն Գոհար Հարությունյանի հուշերում (12. էջ 18-20): Վերջինս պատմում է, որ ներկա է եղել «Էլեգիայի» առաջին կատարմանը կոմպոզիտորի մոսկովյան բնակարանում, երբ հեղինակը հայտարարեց, որ այս պիեսն իր համերգային նվագացանկում մնայուն տեղ ունի: Հարությունյանը պատմում է նաև, որ Բարաջանյանը խոստացել էր այս պիեսը կատարել Խաչատրյանի տուն-թանգարանի բացման ժամանակ (1984 թ. հունվարի 23), սակայն վախճանվեց մինչ այդ (1983 թ. նոյեմբերի 11), իսկ նշված օրն «Էլեգիան» հնչեց արդեն Ալեքսանդր Հարությունյանի կատարմամբ:

Այլ տեղեկություն ունի արվեստաբան Հոփսիսիմե Վարդանյանը, որն իր «Տղամարդու կերպարը Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստում» հոդվածում գրում է, թե կոմպոզիտորն իր «Էլեգիան» գրել է մի գիշերվա ընթացքում և առաջին անգամ կատարել գեղանկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի մոսկովյան արվեստանոցում (14. էջ 460-461): Ուշագրավ է, որ այս տեղեկությունը հանդիպում է միայն Հ. Վարդանյանի մոտ. վերջինիս հետ մեր մասնավոր զրույցից պարզվեց, որ դրա մասին իրեն պատմել է արվեստաբան Պողոս Հայթայանը:

Իսկ ՀՀ ժողովրդական արտիստ Ռուբեն Մաթևոսյանը պատմում է հետևյալը. երբ Բարաջանյանի հետ պատրաստվում էր իր մոսկովյան ելույթներից մեկին, փորձից հետո. «խնդրեց երգեմ Սայաթ-Նովայի «Քանի վուր ջան իմ» երգի մի քանի տարբերակ: Անշուշտ, պատրաստակամությամբ կատարեցի բարեկամիս խնդրանքը: Նա ցանկանում էր Արամ Խաչատրյանի պայծառ հիշատակին մի գործ նվիրել և ասաց, որ Արամ Իլլիչը պաշտում էր Սայաթ-Նովայի մեղեդիները: Մեկ վայրկյան լռելուց հետո բացատրեց, որ իր գրած ստեղծագործության մեղեդային կառուցվածքի հենքում

գլխավոր թեման պետք է անադարտ մնար: Ուշադիր նվազակցելով՝ լսեց բոլոր տարբերակները և կանգ առավ...» (12, էջ 82):

Այս ստեղծագործությունը Կառլեն Թոփչյանի կազմած դաշնամուրային ձեռնարկում ներկայացված է որպես Սայաթ-Նովայի երգի սուկ փոխադրում (8, էջ 190): Իսկ հեղինակի խոսքերով՝ «Էլեգիան հարգանքի տուրք է Ա. Խաչատրյանին, որտեղ ես ու Սայաթ-Նովան հանդես ենք գալիս միասին: Ինձ համար անսահման թանկ այս ստեղծագործությունն արտահայտում է Արամ Խաչատրյանի հանդեպ իմ նվիրական զգացմունքները» (25, 34, էջ 130): Սայաթ-Նովայի երգի և այս պիեսի համեմատական վերլուծություն է կատարել երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր Ա. Գ. Ասատրյանը (1.):

Առնո Բարաջանյանի գրչին են պատկանում նաև այլ դաշնամուրային երկեր, որոնք կամ տպագրվել են, սակայն չեն ներառվել հեղինակային ժողովածուներում (հայտնի են երկու այդպիսի մանրանվագներ՝ 1932 թ. առանձին տպագրության արժանացած «Պիոներական քայլերգը» և «Հայկական պարեր» ժողովածուի չորրորդ հրատարակությունն (1983 թ.) ամփոփող «Երիտասարդ հոտաղների պարը»), կամ էլ մինչ օրս մնում են անտիպ («Անդանտե» և «Սկերցո», Վարիագիաներ, «Հայկական պար», 1-ին Սոնատ և այլն): Բնականաբար, դրանք շատ հաճախ վրիպել են երաժշտագետների ուշադրությունից, կամ էլ դրանց մասին արվել են թռուցիկ ակնարկներ միայն: Մեծ է հավանականությունը, որ դրանք առաջին անգամ լույս կտեսնեն Բարաջանյանի երկերի ակադեմիական-լիակատար ժողովածուում, ինչի անհրաժեշտության մասին գրվել է քանիցս:

Ամփոփելով վերը բերված տեղեկությունները՝ կարող ենք կատարել որոշ եզրակացություններ:

Առնո Բարաջանյանի դաշնամուրային երկերի մասին հիմնարար և ամփոփ պատմագիտական ուսումնասիրություններ դեռևս չկան. անհրաժեշտ տվյալները ցրված են տարբեր գրքերի, գիտական հոդվածների, մամուլի և արխիվային նյութերի էջերում: Անգամ այնպիսի նշանավոր ուսումնասիրությունում, ինչպիսին Միխայիլ Տեր-Օհանյանի «*Арно Бабаджанян*» մենագրությունն է, դրանք ներկայացված են հատվածաբար: Ավելին՝ տարբեր հրատարակումներում մի երևույթի մասին պատմող աղբյուրները որոշ դեպքերում հակասում են իրար՝ երբեմն անկախ իրարից. կան նաև փաստերի դիտավորյալ աղավաղման դեպքեր: Ներկա հրատարակմամբ մենք նպատակ ենք դրել՝ առայժմ հնարավոր ամբողջությամբ ներկայացնել Բարաջանյանի դաշնամուրային երկերի մասին առկա՝ տարբեր աղբյուրներից (մենագրություններից, ժամանակակիցների հուշերից, մամուլից, որոշ արխիվային նյութերից) քաղված տեղեկություններ, որոնց օգնությամբ հնարավոր կլինի վերստեղծել նրա ստեղծագործության տարբերությունը: Առավել լիակատար արդյունքի կարելի է հասնել երկրորդական աղբյուրների՝ Բարաջանյանի գրած և ստացած նամակների, հեռագրերի, ՀԽՍՀ և ԽՍՀՄ կոմպոզիտորների միությունների տեղեկագրերի և այլ նյութերի միջոցով:

**Ծ Ա Ն Ո Ւ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Ն Ա Ե Վ Ա Ն Տ Ի Պ Ն Յ ՈՒ Թ Ե Ր Ի**

1. Ասատրյան Ա. Գ., Սայաթ-Նովա՝ Քանի վոր ջան իմ – Ա. Բարաջանյանի՝ Էլեգիա //Սայաթ-Նովա – 300. հոդվածների ժողովածու. – Եր.: Գիտություն, 2012. *Asatryan A. G. Sayath-Nova – Qani vur jan im – A. Babajanyan – Elegia //Sayath-Nova – 300. hodvatsneri zhoghovatsu. – Yer.: Gituthyun, 2012.*
2. Ա. Գ. Ասատրյանի անձնական արխիվ: A. G. Asatryan andznakan arkhiv
3. Արամ Խաչատրյանի տուն-թանգարան, ԵԳԶ-34: Aram Khachatryan tun-thangaran, YeGDz-34.
4. Բարաջանյան Ա. Հ., Միայն ժամանակի ազդեցությունը, //Սովետական արվեստ., 6, 1971 թ.: *Babajanyan A. H., Miayn zhamanaki azdetzuthyun’., //Sovetakan arvest. 6, 1971 th.:*
5. Երևանի Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան. Առնո Բարաջանյանի ֆոնդ: Yerevani Ye. Charentzi anv grakanuthyan yev arvesti thangaran. Arno Babajanyani fond.
6. Եփրեմյան Լ. Կ., Հ. Ի. Լիտինսկու դասարանում. դիտարկումներ «հետխաչատրյանական սերունդ» եզրի շուրջ //Կանթեղ. 2-3, 2014 թ., էջ 372-382: *Yephremyan L. K., H. I. Litinsku dasaranum. ditarkummer “hetkhachatryanakan serund” yezri shurj //Kantegh. 2-3, 2014 th., ej 372-382.*
7. Թաշյան Ս. Ս., Առնո Բարաջանյան. – Եր.: Հայպետհրատ, 1961 թ.: *Thashchyan S. S., Ar’no Babajanyan. – Yer.: Haypetrat, 1961 th.*
8. Թոփչյան Կ. Խ., Դաշնամուրի ձեռնարկ (Կ. Թոփչյան, Հ. Բսպիրյան). Եր., Ամրոց, 1998 թ.: *Thophchyan K. Kh., Dashnamuri dzer’nark., (K. Thophchyan, H. Ispiryanyan), Yer.: Amrotz, 1998 th.*
9. Հայաստանի ազգային արխիվ. ֆոնդ 1372, մատյան 3, գործ 170: Hayastani azgayin arkhiv. fond. 1372, matyan 3, gorts 170.
10. Հարությունյան Ա. Գ., Հուշեր., Եր., Ամրոց, 2001 թ.: *Harutyunyan A. G., Husher., Yer., Amrotz, 2001 th.*
11. Մազմանյան Ռ. Մ. Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն, հ.2. – Եր.: ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1986 թ.: *Mazmanyanyan R’. M. Sovetahay yerazhshtakan kyanqi taregruthyun, h.2. – Yer.: HKhSH GA hrat., 1986 th.*
12. Մեր Առնոն. հուշարժան «Առնո Բարաջանյան» բարեգործ. հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ. – Եր., Անտարես, 2006 թ.: *Mer Ar’non. hushalbm /“Ar’no Babajanyan” baregorts. himnadrami hayastanyan masnadchuygh. – Yer.: Antares, 2006 th.*
13. /Նվիրվում է Առնո Բարաջանյանին. հոդվածների ժողովածու. Եր., Անտարես, 2008 թ.: */Nvirvum e Ar’no Babajanyanin. hodvatsneri zhoghovatsu. Yer., Antares, 2008 th.*
14. Վարդանյան Հ. Է., Տղամարդու կերպարը Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստում //Կանթեղ. 2014, 2-3, էջ 451-462: *Vardanyan H. E., Tghamardu kerpar’ R’udolf Khachatryan arvestum //Kantegh. 2014, 2-3, ejj 451-462.*
15. *Аматуни С. Б., Арно Бабаджанян: инструментальное творчество., Ер.: Советакан грох, 1985. Amatuni S. B., Arno Babadzhanyan: instrumental’noe tvorchestvo., Yer.: Sovetakan grogh, 1985*
16. Арно Бабаджанян рассказывает о своей «Поэме». //III Международный конкурс им. Чайковского. Пресс-бюл-

летень 8: июнь 21-23. М., 1966., С. 8-9. Ar'no Babadzhanyan rasskazyvaet o svoey "Poeme" //III Mezhdunarodnyj konkurs im. Chaykovskogo. Press-byulleten' 8: iyun' 21-23. М., 1966., S. 8-9.

17. *Արիսյան Ս. Գ.* Грани творчества Арно Бабаджаняна //Вестник Кемеровского государственного университета культуры и искусств. 2012, 18. – с. 89-94. *Arshakyan S. G.* Grani tvorchestva Arno Babadzhanyana //Vestnik Kemerovskogo gosudarstvennogo universiteta kul'tury i iskusstv. 2012, 18. – s. 89-94.

18. *Ատայան Ր. Ա.*, Современный музыкальный язык в произведениях армянских композиторов., //Музыка и современность: сборник статей., М., Музгиз, 1962. *Atayan R. A.*, Sovremennyy muzykal'nyy yazyk v proizvedeniyakh armyanskikh kompozitorov., //Muzyka i sovremennost': sbornik statej. – М.: Muzgiz, 1962.

19. *Բաбаджанյան Ա. Ա.*, Песни (с предисл. Н. Шумской)., М.: Музыка, 1967. *Babadzhanyan A. A.*, Pesni (s predisl. N. Shumskoj)., М.: Muzyka, 1967.

20. *Բաբաձձյան Ա. Ա.*, Хочу волновать сердца //Արվեստ, 1996-97 [հասունկ հասար], էջ 6-9: *Babadzhanyan A. A.*, Khochu volnovat' serdtza //Arvest, 1996-97 [hatuk hamar], ej 6-9.

21. *Գեոդակյան Գ. Մ.*, Бабаджанян Арно., //Музыкальная энциклопедия., Том 1. М., 1973, с. 268. *Geodakyan G. Sh.* Babadzhanyan Arno., //Muzykal'naya entziklopediya., Том 1. – М., 1973, s. 268.

22. Государственный архив РФ, фонд Р9506, опись N 80, дело N 30. Gosudarstvennyj arkhiv RF, fond R-9506, opis' N 80, delo N 30.

23. *Գրիգորյան Ա. Ր.*, Арно Бабаджанян., М.: Советский композитор, 1961. *Grigoryan A. R.*, Arno Babadzhanyan. – М.: Sovetskij kompozitor, 1961.

24. *Կարլան Ա. Լ.*, Предисловие к винил. пластинке “Арно Бабаджанян – пианист”. М.: Мелодия, 1985. *Karlan A. L.*, Predislovie k vinil. plastinke “Arno Babadzhanyan – pianist”. – М.: Melodiya, 1985.

25. *Մելիկյան Ն.*, Документы, рассказывающие о большой жизни., //Комсомолец (Ер.). 1980, 13 мая. *Melikyan N.*, Dokumenty, rasskazyvayushchie o bol'shoj zhizni., //Komsomoletz (Yer.) 1980, 13 maya.

26. *Միրзоева Յ. Ա.*, Бабаджанян Арно //Большая российская энциклопедия. Том 2. М., 2005, с. 617. *Mirzoyeva E. A.*, Babadzanyan Arno // Bol'shaya rossijskaya ejntziklopediya. Том 2. М. 2005, s. 617.

27. *Միրзояն Յ. Մ.*, Фрагменты. – Ер.: Амроц, 2005. *Mirzoyan E. M.* Fragmenty. – Yer.: Amrotz, 2005.

28. Постановление Совета Министров СССР “О присуждении Сталинских премий в области искусства и литературы за 1950 год” //Правда., 1951, 17 марта. Postanovlenie Soveta Ministrov SSSR “O prisuzhdenii Stalinskikh premij v oblasti iskusstva i literatury za 1950 god” //Pravda. 1951, 17 marta.

29. Режиссура игры на фортепиано. В. М. Берлин – музыкант, личность, педагог: Сборник статей и материалов /Сост. А. М. Аксенов. – М.: РАМ им. Гнесиных, 2006. Rezhissura igrы na fortepiano. V. M. Berlin – muzykant, lichnost', pedagog: Sbornik statej i materialov /Sost. A. M. Aksenov. – М.: RAM im. Gnesinykh, 2006.

30. Российский государственный архив литературы и искусства: фонд N 2916, оп. N 2, ед.хр. 319. Rossijskij gosudarstvennyj arkhiv literatury i iskusstva: fond N 2916, op. N 2, yed. khr. 319.

31. Российский национальный музей музыки, фонд N 230 (Арно Бабаджанян). Rossijskij natsional'nyj muzej muzyki, fond N 230 (Ar'no Babadzhanyan).

32. *Տաֆրյան Կ. Ս.*, Арно Бабаджанян и его “Героическая баллада”., /Руководитель: проф. Г. Г. Тигранов /Теоретико-композиторский факультет Ереванской Гос. консерватории. Ер., 1953. *Safaryan K. S.*, Arno Babadzhanyan i yevo “Geroicheskaya ballada” /Rukovoditel': prof. G. G. Tigranov /Teoretiko-kompozitorskij fakul'tet Yerevanskoj Gos. konservatorii. – Yer., 1953.

33. //Советская культура. 1965, 28 декабря, N 158. //Sovetskaya kul'tura. 1965, 28 dekabrya, N 158.

34. *Տերոգյան Մ. Ի.*, Арно Бабаджанян: монография., М.: Композитор, 2001. *Teroganyan M. I.*, Arno Babadzhanyan: monografiya. – М.: Kompozitor, 2001.

35. Geodakyan Georg. (Art.) Babajanyan, Arno //MGG Online, hrsg. von Laurenz Lütteken, Kassel, Stuttgart, New York: 2016ff., zuerst veröffentlicht 1999, online veröffentlicht 2016, <https://www.mgg-online.com/mgg/stable/15594>

36. Melikyan Hayk. [About Arno Babajanian and his piano works] //Arno Babajanian: Complete original piano works [CD recording]. – Naxos, 2014.

37. Sarkisyan Svetlana. Babadjanian, Arno Harutyuni //New Grove Dictionary of Music and Musicians, online version /<https://doi.org/10.1093/gmo/9781561592630.article.01642>

Բաճնալի-բաճնը. Ա. Բաբաձձյանյան, Վ. Իգումնով, Բ. Բեռլին, Ա. Հարությունյան, Է. Միրզոյան, Ս. Ամատունի, Մ. Տեր-Օհանյան, դաշնամուր, հուշեր, փաստաթղթեր, պատմագիտություն:

Ключевые слова: А. Бабаджанян, К. Игумнов, В. Берлин, А. Арутюнян, Э. Мирзоян, С. Аматауни, М. Тероганян, фортепиано, воспоминания, документы, историография.

Keywords: A. Babajanian, K. Igumnov, V. Berlin, A. Arutiunian, E. Mirzoyan, S. Amatuni, M. Terohanian, piano, memoires, documents, Historiography

Տեղեկություններ հեղինակի մասին. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ ԳԵՐԱՄԻՄԻ (ծն. 10.01.1997 թ., ք. Վանաձոր) – արվեստի պատմաբան: Ավարտել է՝ 2012-ին Վանաձորի N 3 արվեստի դպրոցի դաշնամուրի բաժինը (գերազանց): 2013-ին՝ նույն տեղի N 10-րդ ավագ դպրոցը, 2017-ին՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի արվեստաբանության բաժնի բակալավրիական կրթությունը (զիտ. դեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆ. Լ. Բ. Չոլախյան):

Կ Ն Մ Ա Ն Ո Ւ Ն Ի Դ Ա Ն Ա Ն Ո Ւ Յ Յ Ա Ն Ի Ե Խ Ա Ղ Ո Ւ Ն Ի Յ Ո Ւ Ն Ե

Ավարտական աշխատանքի թեման է՝ «Առնո Բաբաջանյանի կերպարը արվեստում և նրա քանդարանի ստեղծման հիմնահարցը»: Ներկայում նույն բաժնի մագիստրոսական կրթության 2-րդ կուրսի ուսանող է: 2013-ից մինչ օրս ԵՊՀ մշակույթի կենտրոնի անդամ է (դաշնակահար, գործիքավորող, գրավոր): Հեղինակ է՝ և հրատարակության է պատրաստել երիտասարդ համալսարանականների երաժշտական ստեղծագործությունների «Անկախության սերնդի ձայնը» ժողովածուն., Եր., ԵՊՀ հրատարակչություն., 2018 թ.: Զբաղվում է դասական երաժշտության պատմությամբ և բնագրագիտությամբ:

Information about the author: ANDREASYAN ARTYOM G. (b. 10.01.1997, Vanadzor) - art historian. Graduated from the piano department of Vanadzor Art School N 3 with honors in 2012. Graduated from local High School N10 in 2013. Graduated from the Chair of History and Theory of Arts with bachelor's degree in 2017 (supervisor - Doctor of Arts, Prof. L. B. Chookaszian). The subject of his graduate thesis is "Arno Babajanian in fine arts: The problems of establishing his museum". Currently he is a candidate for master's degree in History of Arts. Since 2013 - member of the Culture Centre of YSU (pianist, arranger, engraver). He has also prepared for publication the anthology of musical compositions by young universitarians "Voice of the independence generation" (Yerevan: YSU Publishers, 2018). Also engaged in Classical music history and textual criticism.

Сведения об авторе: АНДРЕАСЯН АРТЕМ ГЕРАСИМОВИЧ (р. 10.01.1997, г. Ванадзор) – историк искусства. В 2012 г. окончил с отличием фортепианное отделение ванадзорской школы искусств #3. В 2013 г. окончил местную старшую школу #10. В 2017 г. окончил бакалавриат отделения искусствоведения при факультете истории ЕГУ (науч. руководитель – доктор искусствоведения, проф. Л. Б. Чугасзян). Тема дипломной работы – “Образ Арно Бабаджаняна в искусстве и основные вопросы по созданию его музея”. В настоящее время – студент 2-го курса магистратуры того же отделения. С 2013 г. – член Центра культуры ЕГУ (пианист, аранжировщик, гравер). Подготовил к изданию сборник музыкальных сочинений молодых студентов и выпускников ЕГУ “Голос поколения независимости”, Ер.: Изд-во ЕГУ, 2018. Занимается историей классической музыки и текстологией.

Րեզյումե

Искусствовед, магистрант кафедры истории искусств ЕГУ *Артем Герасимович Андреасян*. – “*О фортепианных сочинениях Арно Бабаджаняна и смежных историографических вопросах*”.

В статье приводятся историографические данные о фортепианных сочинениях Народного артиста СССР, композитора Арно Арутюновича Бабаджаняна. Также рассматриваются некоторые вопросы, касающиеся его обучения в Москве и преподавательской деятельности в Ереване. Основная цель статьи – уточнение датировки и прочих исторических вопросов творческой биографии Бабаджаняна, а также подготовка к наиболее полному восстановлению хронологии его жизни и творчества.

Summary

Art historian, candidate for Master's degree in History and Theory of Arts at YSU, *Artyom Gerasim Andreasyan* - “*On the piano compositions by Arno Babajanyan and adjoined historiographical issues*”.

The article presents historiographical data concerning the piano compositions by Arno Babajanyan, composer, People's Artist of the USSR. Besides, some questions about his studies in Moscow and teaching in Yerevan are examined. The main purpose of the present article is rectification of dating of some works and other historical issues on Babajanyan's biography as well as preparation for full reconstruction of the chronology of his life and work.